

A

12.00.02

Մ-83

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՍԱՐԳԻՍ ՎԱՍՅԱՅԻ ՄՆԱՅԱԿԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԱՏԱԽԱՉՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԺԲ.00.02 «Հանրային իրավունք - սահմանադրական, վարչական, ֆինանսական, մունիցիպալ, բնապահպանական, եվրոպական իրավունք, պետական կառավարում» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի զիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ը

Երևան – 2011

АКАДЕМИЯ ГОСУДАРСТВЕННОГО УПРАВЛЕНИЯ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

САРГИС ВАСЯЕВИЧ МНАЦАКАНЯН

ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО ПРАВОВОГО СТАТУСА
ПРОКУРАТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

А В Т О Р Е Ф Е Р А Т

диссертация на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.02 - “Публичное право- конституционное, административное, муниципальное, финансовое, экологическое, европейское право, государственное управление”

Ереван-2011


Ատենախոսության թեման հաստատվել է Հայ – Ռուսական (Սլավոնական) համալսարանի գիտական խորհրդում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ **Ա. Ս. Ղամբարյան**

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր **Ա. Հ. Երիցյան**

իրավաբանական գիտությունների թեկնածու **Հ. Բ. Քոչարյան**

Առաջատար կազմակերպություն՝ **Եվրոպական կրթական տարածաշրջանային ակադեմիա**
Պաշտպանությունը կայանալու է՝ 2011 թվականի հունիսի 8-ին, ժամը 15.00-ին ՀՀ պետական կառավարման ակադեմիայում գործող ՀՀ ԲՈՁ-ի Իրավաբանության 041 մասնագիտական խորհրդի նիստում /0028, Երևան -28, Գինյան 8/
Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ պետական կառավարման ակադեմիայի գրադարանում:
Սեղմագիրն առաքվել է 2011 թվականի հունիսի 5-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր  **Ա. Հ. Նշատրյան**

Тема диссертации утверждена в научном совете Российско-Армянского (Славянском) Университета

Научный руководитель: кандидат юридических наук, доцент **А.С.Гамбарян**


Официальные оппоненты: доктор юридических наук, профессор **А. Г. Ерицян**
кандидат юридических наук **О. И. Кочарян**

Ведущая организация: **Европейская региональная образовательная академия**

Защита состоится 8-ого июля 2011 года в 15.00 часов на заседании специализированного совета ВАК Республики Армения 041 при Академии государственного управления РА (0028, г. Ереван, ул. Киевяна 8).

С диссертацией можно ознакомиться в библиотеке Академии государственного управления Республики Армения

Афтореферат разослан 5 июня 2011 года.

Ученый секретарь Специализированного совета, доктор юридических наук, профессор  **А.Г. Хачатрян**



3696-2011

ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ուսումնասիրության թեմայի արդիականությունը: Հայաստանի Հանրապետությունում իրավական պետության կառուցման և քաղաքացիական հասարակության կայացման գործընթացում կարևորվում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների պաշտպանության կառուցակարգերը: Հայտնի է, որ մարդու իրավունքների ապահովման և պաշտպանության կառուցակարգերում իր ուրույն տեղն ունի ՀՀ դատախազությունը:

Հասարակության արժեհամակարգի վերաիմաստավորման, նոր իրավա-ընկալման, մասնավոր և հանրային շահերի հարաբերակցության փոփոխության պայմաններում իրավապահ մարմինների, այդ թվում դատախազության առջև դրվել են որակապես նոր խնդիրներ, վերապահվել որակական առումով նոր գործառույթներ, որոնց ընկալումը և արդյունավետ իրականացումը պահանջում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված համապատասխան դրույթների վերլուծություն: Իրավական համակարգում դատախազության գործառնական կարևոր դերի մասին է վկայում այն հանգամանքը, որ դատախազության գործառույթները սահմանված են պետության հիմնական օրենքում:

ՀՀ դատախազության սահմանադրաիրավական հիմքերի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է 27.11.2005 թ. ՀՀ Սահմանադրության մեջ կատարված փոփոխություններով և լրացումներով, որոնք առնչվում են նաև դատախազության սահմանադրական կարգավիճակին (ՀՀ գլխավոր դատախազի, տեղակալների նշանակման կարգ, դատախազության գործառույթներ և այլն):

Սահմանադրական բարեփոխումներից հետո օրենսդրության մեջ կատարվեցին դատախազության կարգավիճակին վերաբերող հայեցակարգային փոփոխություններ, ընդունվեց «Դատախազության մասին» ՀՀ նոր օրենքը: Ընթացիկ օրենսդրությամբ դատախազության կարգավիճակի վերաբերյալ ցուցաբերվեց նոր մոտեցում, մասնավորապես՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքում կատարվեցին փոփոխություններ, որոնցով վերացվեց դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու լիազորությունը, հայեցակարգային նոր մոտեցում դրվեց ստորադաս դատախազի և վերադաս դատախազի փոխհարաբերությունների հիմքում և այլն: Նշված հանգամանքներով պայմանավորված՝ դատախազության հետ առնչվող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումը գործնականում առաջացրել է մի շարք խնդիրներ և հարցադրումներ, որոնք կարիք ունեն համակողմանի գիտական վերլուծության:

Չնայած ՀՀ-ում դատախարակական բարեփոխումների երկրորդ փուլի շրջանակներում արդեն ընդունվել և գործում են դատախազության մարմինների կազմակերպումը և գործունեությունը կարգավորող օրենսդրական ատանձին ակտեր, սակայն չի կարելի ավարտված համարել բարեփոխումներն այս ոլորտում, քանի որ շատ հարցեր մնացել են չկարգավորված կամ բովանդակում են հակասական կարգավորում (հստակեցված չեն քրեական հետապնդման հարուցումը, քննիչի դատավարական ինքնուրույնությունը, մինչդեռ ատակական վարույթի նկատմամբ դատախազական հսկողության սահմանները և այլն):

Թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև եվրոպական հանրության մեջ ՀՀ-ի ինտեգրվելու գործընթացով: Այս առումով՝ ՀՀ նոր դատավարական-իրավական քաղաքականության վրա մեծ ազդեցություն ունեն եվրոպական չափորոշիչները, որոնք պետք է արտացոլվեն ՀՀ օրենսդրության մեջ և դատական պրակտիկայում: Հայտնի է, որ ՀՀ-ն 2002 թ. ապրիլի 26-ին վավերացրեց Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության եվրոպական կոնվենցիան, որի մի շարք դրույթներ վերաբերում են նաև դատախազության գործունեությանը, մասնավորապես՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածը կոչված է երաշխավորելու արդար դատաքննության իրավունքի իրացումը: «Բացանիման ընդդեմ Ռուսաստանի Դաշնության» գործով մարդու իրավունքների Եվրոպական դատարանն առաջին անգամ քննության առնելով դատախազի կողմից պետության ոչ գույքային շահի պաշտպանության առումով քաղաքցիական գործով հայց հարուցելու լիազորության իրականացումը՝ արձանագրել է, որ դատարանում քաղաքացիական գործով դատախազի՝ որպես կողմ մասնակցությունը չի խախտում կողմերի հավասարության և մրցակցության սկզբունքը:

Բացի այդ, Եվրոպայի խորհրդի շրջանակներում ընդունվել են մի շարք հանձնարարականներ, որոնք ուղղակիորեն վերաբերում են դատախազությանը: Դատախազության վերաբերյալ հիմնական միջազգային իրավական փաստաթղթերն են՝ «Դատախազների համար էթիկայի և վարքագծի եվրոպական ղեկավար սկզբունքները» (ընդունված Եվրոպայի գլխավոր դատախազների 6-րդ կոնֆերանսում, 2005 թ. մայիսի 31-ին, Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների գլխավոր դատախազների (CPGE) 7-րդ կոնֆերանսի եզրափակիչ փաստաթուղթ), «Օրենքի գերակայության վրա հիմնված ժողովրդավարական հասարակությունում դատախազության դերի մասին» 2003 թ. մայիսի 27-ի Եվրոպայի խորհրդի խորհրդարանական ընկերակցության մշտական հանձնաժողովի թիվ 1606/2003/ հանձնարարականը, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի պատասխանը ԵՖԽՎ 1604/2003/ «Դեմոկրատական իրավական պետության մեջ դատախազության դերի մասին» (ընդունված 2004 թ. փետրվարի 4-ին նա-

խարարների տեղակալների 870-րդ հանդիպման ժամանակ), 2000 թ. մայիսի 27-ի «Քրեական արդարադատության համակարգում դատախազության դերի մասին» ԵՄԿԿ թիվ 4/2000/19 հանձնարարականը, «Քրեական հետապնդում իրականացնող մարմինների դերին վերաբերող ղեկավար սկզբունքներ» (ընդունված 1990 թ. սեպտեմբերի 7-ին ՄԱԿ-ի 8-րդ Կոնգրեսում, հանցավորության կանխման և իրավախախտողների նկատմամբ վերաբերմունքի կապակցությամբ), «Մասնագիտական պատասխանատվության չափորոշիչները և դատախազների հիմնական իրավունքներն ու պարտականությունները» (ընդունված 1999 թ. ապրիլի 21-ին Դատախազների միջազգային ընկերակցության կողմից): Դատախազության դերը քրեաիրավական ոլորտից դուրս մարդու իրավունքների և հասարակական շահերի պաշտպանության բնագավառում (ընդունված 2008 թ. հուլիսի 3-ին Եվրոպական երկրների գլխավոր դատախազների կոնֆերանսում):

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները: Ատենախոսության հիմնական նպատակը ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո ձևավորված դատախազության կարգավիճակին վերաբերող օրենսդրության վերլուծության հիման վրա օրենսդրական թերությունները և բացթողումները բացահայտելը և դրանք վերացնելու ուղիներ ներկայացնելու փորձն է: Այդ առումով նպատակ է դրվել համեմատական վերլուծությամբ պարզել ճյուղային օրենսդրությամբ սահմանված առանձին օրենսդրական դրույթների և դրանց կիրառման պրակտիկայի համապատասխանությունը Սահմանադրությանը և Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումներին:

Ուսումնասիրությունը լիարժեք և գործնական առումով արդյունավետ դարձնելու նպատակով առաջադրվել են հետևյալ խնդիրները.

- լուսաբանել դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը, տարրերը, դատախազության կազմավորման և գործունեության վերաբերյալ եվրոպական հիմնական չափորոշիչները և սահմանադրական սկզբունքները:
- Ներկայացնել դատախազության սահմանադրական գործառույթները քրեական, վարչական և քաղաքացիական դատավարություններում՝ շեշտադրելով իրավակիրառ պրակտիկայում ծագող հիմնական խնդիրները:
- Վերլուծել դատախազության լիազորությունները գործունեության առանձին ոլորտներում, մասնավորապես՝ իրավաստեղծ գործունեության ոլորտում և սահմանադրական օրինականության ապահովման գործընթացում:

Ուսումնասիրության օբյեկտը և առարկան: Ատենախոսության ուսումնասիրման օբյեկտն են դատախազության սահմանադրական գործառույթների իրականացման ոլորտում առաջացող հասարակական հարաբերությունները:

Ուսումնասիրման առարկան են՝

1. դատախազության գործունեության և կազմակերպման սահմանադրական կարգավորումը,

2. դատախազության սահմանադրական գործառույթների վերաբերող սահմանադրական, քրեական և քաղաքացիական դատավարական իրավունքի նորմերը,

3. դատախազության գործառույթներին առնչվող Մարդու իրավունքների Եվրոպական դատարանի և ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները,

4. դատախազության վերաբերյալ մշակված գիտական աշխատությունները:

Գիտական նորույթը: Ատենախոսության գիտական նորույթը դրսևորվում է նրանում, որ ՀՀ Սահմանադրության փոփոխություններից հետո փորձ է կատարվում համակողմանի վերլուծել ՀՀ Սահմանադրության մեջ ամրագրված՝ դատախազության գործառույթների ընկալման և իրականացման հիմնախնդիրները:

Ատենախոսության մեջ ներկայացվել են դատախազության սահմանադրական գործառույթների էությունը, դատախազության մոդելների վերաբերյալ եվրոպական չափորոշիչները:

Ատենախոսության մեջ առաջարկվում է դատախազության որոշ գործառույթների սահմանադրաիրավական կարգավորման կատարելագործման նպատակով օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ, ներկայացվել են համապատասխան օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու նախագծեր:

Առաջին անգամ վերլուծվում են դատախազության լիազորությունները իրավաստեղծ գործունեության ոլորտում և սահմանադրական դատավարությունում: Ուսումնասիրության արդյունքում առաջարկվում է սահմանադրական դատավարության վերաբերյալ օրենսդրության մեջ կատարել փոփոխություններ:

Ուսումնասիրության մեթոդաբանական հիմքը: Հետազոտության ընթացքում հեղինակի կողմից օգտագործվել են տարբեր մեթոդներ, այդ թվում՝ դիալեկտիկական, իրավահամեմատական, վերլուծական, վիճակագրական և այլն: Մասնավորապես, իրավահամեմատական մեթոդի օգնությամբ վերլուծվել են Եվրոպական կոնվենցիայի, Եվրոպական դատարանի նախադեպային իրավունքի և արդարադատության սահմանադրական սկզբունքների իրավական կարգավորման միջև առկա ընդհանրությունները, տարբերությունները, հակասությունները:

Աշխատության տեսական հիմքը: Ատենախոսության համար տեսական հիմք են հանդիսացել սահմանադրական իրավունքի, քրեական, քաղաքացիական և վարչական դատավարության իրավունքների,

դատախազության տեսությանը վերաբերող աշխատություններ, ատենախոսություններ և գիտական հոդվածներ:

Մասնավորապես, ուսումնասիրության ընթացքում օգտագործվել են ինչպես հայրենական, հատկապես Ա. Հարությունյանի, Գ. Հարությունյանի, Վ. Օսիպյանի, Ա. Բաղդասարյանի, Գ. Դանիելյանի, Ա. Երիցյանի, Գ. Ղազինյանի, Ա. Ղամբարյանի, Ա. Հովսեփյանի, Ռ. Պետրոսյանի, Ս. Դիլբանդյանի, Ս. Ավագյանի, այնպես էլ օտարազգի, հատկապես Վ. Մավիցկու, Բ. Պետրուխինի, Վ. Լագերնայի, Վ. Լեբեդևի և այլոց աշխատությունները:

Ուսումնասիրության նորմատիվ հիմքը: Ատենախոսության նորմատիվ հիմքն են կազմում ՀՀ Սահմանադրությունը, Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին եվրոպական կոնվենցիան, միջազգային իրավական այլ փաստաթղթեր, ՀՀ Սահմանադրական դատարանի առանձին որոշումները, «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերը, ՀՀ Սահմանադրական դատարանի, ՀՀ Վճռաբեկ դատարանի, ՀՀ գլխավոր դատախազի նորմատիվ իրավական ակտեր և այլն:

Ուսումնասիրության փորձառնական հիմքը: Ուսումնասիրության էմպիրիկ հիմքն են կազմում

ա) դատախազության համակարգում հեղինակի ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում մի շարք քրեական գործերի ուսումնասիրությունները և դատախազի լիազորությունների իրականացման ընթացքում ծագող խնդրահարույց դեպքերը,

բ) ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումները,

գ) ՀՀ գլխավոր դատախազության համապատասխան վարչությունների կողմից պատրաստված տեղեկատվական նամակները,

դ) ձեռք բերված որոշ վիճակագրական տվյալները:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ելնելով առաջադրված նպատակներից և դրանից հետևող խնդիրներից՝ պաշտպանության են ներկայացվում հետևյալ հիմնական դրույթները.

«Դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակ» հասկացությունն իր բովանդակությամբ առավել լայն է, քան «դատախազության սահմանադրական կարգավիճակ» հասկացությունը: Դատախազության սահմանադրական կարգավիճակը նշանակում է ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված դատախազության լիազորությունները, գործառույթները, գործունեության և կազմակերպման սկզբունքները, մինչդեռ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի տարրերն ամրագրված են ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլ նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, դատավարական օրենսգրքերում և այլ իրավական ակտերում:

1. Եվրոպայում բացակայում է դատախազության միասնական մոդելը, սակայն Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների կողմից արտահայտված դիրքորոշումները սահմանագծում են այն նվազագույն պահանջները, որոնց պետք է բավարարեն դատախազության ինստիտուցիոնալ և գործառնական ազգային մոդելները:

2. ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում թվարկված դատախազության գործառնականության արդյունավետ իրականացման համար ՀՀ դատախազությունը պետք է օժտված լինի համապատասխան լիազորություններով: Եթե դատախազության գործառնականության և նրան վերապահված լիազորությունների միջև ստեղծվում է անհամաչափություն, ապա նման դեպքում դատախազությունը չի կարող արդյունավետ կերպով և լրիվ ծավալով իրականացնել իր վրա դրված գործառնականությունները: Դատախազի լատենտային լիազորություններ ասելով հասկացվում են այն լիազորությունները, որոնք թեև ուղղակիորեն նախատեսված չեն ընթացիկ օրենսդրությամբ, սակայն բխում են դատախազի սահմանադրական գործառնականության և ճանաչում են ստացել իրավակիրատ պրակտիկայում (մասնավորապես՝ դատական մեկնաբանություններում): Այս կապակցությամբ ՀՀ Սահմանադրական դատարանն իր ՄԴՈ-690 որոշման 11-րդ կետում, ՄԴՈ-832 9-րդ կետում արտահայտել է, մասնավորապես, հետևյալ իրավական դիրքորոշումը. «Պետական ցանկացած մարմնի կարող է տրվել այս կամ այն լիազորությունը, որն անհրաժեշտ է նրա առջև դրված խնդիրները լիարժեք լուծելու համար, եթե դրանք համապատասխանում են տվյալ մարմնի սահմանադրաիրավական կարգավիճակին և սահմանադրորեն ամրագրված ու երաշխավորված արժեքներին»:

3. Օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության սահմանադրական գործառնական անհրաժեշտ է նախատեսել ՀՀ Սահմանադրության մեջ, իսկ մինչ այդ հարցի սահմանադրական լուծումն անհրաժեշտ է ընթացիկ օրենսդրության մեջ փոփոխության ենթարկել «հետաքննություն» հասկացությունն այնպես, որ այն ընդգրկի նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը:

Հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողության սահմանադրական գործառնական շրջանակներում դատախազի կողմից դատավարական գործողությունների կատարումը չի հակասում Սահմանադրությանը, եթե դրանց նպատակներն են՝

ա. դատավարական հարաբերություններին վերաբերող բողոքների լուծման նպատակով քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունների, որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգում,

բ. անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու նպատակով դատարան դիմելու քննիչի միջնորդությունը հաստատելիս կամ խափանման և այլ հարկադրանքի միջոցի կիրառման օրինականության և հիմնավորվածության ստուգում:

4. Գործող քրեադատավարական օրենսդրության համաձայն՝ ՀՀ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտերի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունք ունեն քրեական դատավարության մասնակիցները (բացառությամբ քրեական հետապնդման մարմնի) և ՀՀ գլխավոր դատախազն ու նրա տեղակալը: Փաստորեն նշված նորմով հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնող դատախազը, գործով մեղադրողը գրկվել է ՀՀ վերաքննիչ դատարանի՝ օրինական ուժի մեջ չմտած դատական ակտը ՀՀ վճռաբեկ դատարան բողոքարկելու հնարավորությունից, ինչը հակասում է մրցակցային դատավարության սահմանադրական սկզբունքին:

5. ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածում որպես ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու՝ ՀՀ գլխավոր դատախազի լիազորության իրականացման պայման հիշատակվում է «իբր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունը, որը մեկնաբանելիս պետք է հիմք ընդունել սահմանադրական նորմերի ինքնավար մեկնաբանման կանոնը և փորձել բացահայտել այս հասկացության ոչ թե քրեադատավարական, այլ սահմանադրաիրավական նշանակությունը: Սահմանադրաիրավական իմաստով կոնկրետ գործը համարվում է ՀՀ գլխավոր դատախազի վարույթում բոլոր այն դեպքերում, երբ տվյալ գործի նկատմամբ ՀՀ դատախազությունը իրականացնում է իր սահմանադրական գործառնականությունները:

Ուսումնասիրության արդյունքների գործնական նշանակությունը:

Սույն աշխատության արդյունքները գործնական կիրառություն կարող են ստանալ իրավաստեղծ և իրավակիրատ գործունեության ընթացքում:

Իրավաստեղծ գործունեության ոլորտում ատենախոսության դրույթները կարող են օգտագործվել ՀՀ Սահմանադրության, «Դատախազության մասին» ՀՀ օրենքի, ՀՀ քրեական և քաղաքացիական դատավարության օրենսգրքերի կատարելագործման և ՀՀ դատավարական օրենսդրությունը եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելուն ուղղված աշխատանքների ընթացքում: Այս նպատակով աշխատանքում ներկայացվում են ՀՀ օրենսդրության մեջ համապատասխան փոփոխություններ և լրացումներ կատարելու առաջարկներ:

Ներկայացվում են նաև դատավարական առանձին նորմերի մեկնաբանություններ, որոնք կարող են օգտագործվել դատախազների և քննիչների աշխատանքի ընթացքում:

Ատենախոսության արդյունքները կարող են օգտագործվել նաև ուսումնական նպատակներով:

Ատենախոսության արդյունքների փորձարկումը: Ատենախոսության հիմնական դրույթները քննարկվել են Ռուս-հայկական (Մլավոնական) համալսարանի սահմանադրական և մունիցիպալ իրավունքի ամբիոնի նիստերում: Տպագրվել է 5 գիտական հոդված:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ատենախոսությունը բաղկացած է առաջաբանից, երեք գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից և հավելվածից:

Առաջաբանում ներկայացվում է թեմայի արդիականությունը, բացահայտվում են աշխատության նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, ներկայացվում են աշխատության մեթոդաբանական, տեսական նորմատիվ և էմպիրիկ հիմքերը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, ինչպես նաև ուսումնասիրության արդյունքների գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին «ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը և տեղը պետական իշխանության համակարգում» գլուխը բաղկացած է չորս ենթագլխից:

Առաջին ենթագլխում վերլուծվում են ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի հասկացությունը և տարրերը: Այդ նպատակով վերլուծվել են իրավունքի տեսության, սահմանադրական և վարչական իրավունքի գիտության մեջ պետական իշխանության մարմինների «իրավական կարգավիճակ» հասկացության ընկալման վերաբերյալ առկա մտեցումները, հարակից հասկացությունների հետ փոխհարաբերակցությունը: Արված վերլուծության հիման վրա ներկայացվել են դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակը, դրա կառուցվածքային տարրերը և նորմատիվ հիմքերի ամրագրման հետ կապված խնդիրները: Առաջարկվում է տարբերել «դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակ» և «դատախազության սահմանադրական կարգավիճակ» հասկացությունները: «Դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակ» հասկացությունն իր բովանդակությամբ առավել լայն է, քան «դատախազության սահմանադրական կարգավիճակ» հասկացությունը: Դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի տարրերն ամրագրված են ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլ նաև «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, դատավարական օրենսգրքերով և այլ իրավական ակտերով:

Այստեղ կարևորվում են դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի իրավական հիմքերը, քանի որ դրանով են պայմանավորված այս կամ այն իրավական ակտի կարգավորման առարկայի և սահմանների

որոշումը և տվյալ ակտում դատախազությանն առնչվող նորմերի նախատեսման թույլատրելիությունը: Այս տեսանկյունից քննադատական վերլուծության է ենթարկվում ՀՀ դատական օրենսգրքի 6-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված դրույթը, ըստ որի՝ դատախազը պարտավոր է հարգել դատարանի անկախությունն ու անկողմնակալությունը և, մասնավորապես, չպետք է իր գործողություններով կասկածի տակ դնի դատական ակտի օրինականությունը կամ խոչընդոտի դրա կատարումը, բացառությամբ դատական ակտի բողոքարկման իր իրավունքն իրագործելիս: Հեղինակը նշում է, որ դատական օրենսգրքի նշված դրույթը խոցելի է ոչ միայն առարկայի իրավական կարգավորման տեսանկյունից, այլ նաև իր բովանդակությամբ, քանի որ գործնականում հնարավոր է իրավիճակ, որ դատարանն ընդունում է միջանկյալ բնույթի դատական ակտ, որը ենթակա չէ բողոքարկման, իսկ դատախազը գտնում է, որ այդ ակտով կասկածի տակ է դրվում դատավորի անաչառությունը, և փորձում է դրանով հիմնավորել դատավորի ինքնաբացարկի միջնորդությունը: Դատական օրենսգրքից բխում է, որ դատավարության կողմերից բացառապես դատախազն է գրկվում ինքնաբացարկի միջնորդությունը ներկայացնելիս դատական ակտի օրինականությունը և դրա համատեքստում նաև դատարանի անաչառությունը կասկածի տակ դնելուց:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի տառացի ձևակերպումից բխում է, որ օրենքով նախատեսված դեպքում դատախազության գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունները կարող են կարգավորվել նաև այլ ենթաօրենսդրական ակտերով:

Ատենախոսության այս գլխի երկրորդ ենթագլխում քննարկվում է դատախազության տեղը պետական ինստիտուտների համակարգում: Փաստվում է, որ դատախազության ժամանակակից սահմանադրական մոդելը լիարժեք և հստակ պատասխան չի տալիս այն տեսական հարցին, թե ինչ տեղ է զբաղեցնում դատախազությունը պետական իշխանության մարմինների համակարգում: Սահմանադրության 103-րդ հոդվածը վերաբերում է միայն դատախազության լիազորություններին (ավելի ճիշտ՝ գործառնություններին): Սահմանադրական մակարդակով դատախազության իրավական կարգավիճակի նման անորոշությունը հնարավորություն չի տվել պարզելու նրա հարաբերակցությունը իշխանության մյուս ճյուղերի հետ: Այդուհանդերձ, դատախազության մարմինների կողմից իրականացվող իշխանությունը ինքնուրույն և անկախ է իշխանության մյուս ճյուղերից: Այն ունի բացառապես իրեն վերապահված լիազորություններ, իր գործառնության ուղղվածությունը և միայն իրեն ներհատուկ գործունեության մեթոդներ: Ատենախոսության մեջ նշվում է, որ դատախազական իշխանությունն իր իրավաբանական բնույթով չի կարող ենթարկվել որևէ այլ իշխանության ճյուղի: Դա նշանակում է, որ դատախազությունը պետք է առանձնացնել իշխանության մյուս ճյուղերից:

Հնդունվում է այն տեսաբանների կարծիքը, ովքեր գտնում են, որ ՀՀ Սահմանադրության 5-րդ հոդվածում ամրագրված իշխանությունների բաժանման սահմանադրական դրույթները գործնականում ամբողջությամբ չեն իրականացվում: Դա բացատրվում է նրանով, որ դեռևս Շ. Լ. Մոնտեսպիոյից եկող իշխանությունների բաժանման տեսության դասական հիմնադրույթներն արդեն հնացել են և չեն համապատասխանում ժամանակակից քաղաքական կյանքին, հետևաբար՝ շտկումների և նորացման կարիք ունեն¹:

Ատենախոսության առաջին գլխի երրորդ ենթագլխում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության դատախազության կազմակերպման և գործունեության սահմանադրական սկզբունքները: Վերլուծվում են դատախազության կազմակերպման և գործունեության սկզբունքների նորմատիվության, սկզբունքների արտացոլման եղանակները: «Դատախազության մասին» ՀՀ օրենքում ուղղակիորեն թվարկված են դատախազի գործունեության հետևյալ սկզբունքները (դրույթները)՝ հրապարակայնությունը, դատախազի ինքնուրույնությունը և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, նրա ապաքաղաքականացվածությունը: Այս կապակցությամբ նշվում է, որ դատախազության կազմակերպման և գործունեության սկզբունքների համակարգը սահմանափակված չէ միայն վերը նշված սկզբունքներով: «Դատախազության մասին» ՀՀ օրենքում ուղղակի ամրագրված սկզբունքներ են, ինչը չի բացառում «Դատախազության մասին» ՀՀ օրենքից բխող այլ սկզբունքների գոյությունը (օրինակ՝ դատախազության կենտրոնացվածությունը, դատախազի անկախությունը): Բացի այդ, շեշտվում է, որ դատախազի ապաքաղաքականացվածության վերաբերյալ օրենսդրական դրույթը դատախազության գործունեության ինքնուրույն սկզբունք չէ, այլ դատախազի անկախության սկզբունքի ապահովման եղանակներից մեկն է: Նշված ենթագլխում քննարկվում են դատախազության միասնականության, կենտրոնացվածության և դատախազի ինքնուրույնության, անկախության, հրապարակայնության սկզբունքները:

Ատենախոսության մեջ նշվում է նաև, որ թեև 2005 թ. սահմանադրական փոփոխություններից հետո ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածից հանվեց «կենտրոնացված համակարգ» հասկացությունը, սակայն դա չի նշանակում, որ դատախազությունը դադարել է կենտրոնացված համակարգ լինել: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի բովանդակության վերլուծությունը վկայում է այն մասին, որ դատախազությունը շարունակում է մնալ կենտրոնացված համակարգ: Դատախազության կենտրոնացվածության սկզբունքը բխում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածից, որը կարգա-

¹ Керимов А.Д. Проблемы конституционной реформы и государственного строительство в России. М., РАГС, 2000. с. 8-9.

վորում է դատախազությունում ծառայողական ենթակայության հարաբերությունները: Միևնույն ժամանակ, ընդունվում է, որ նոր օրենսդրությամբ փորձ է արվել զուգակցելու դատախազության կենտրոնացվածության և դատախազների ինքնուրույնության սկզբունքները:

Առաջին գլխի չորրորդ ենթագլխում ներկայացվում են դատախազության կարգավիճակի վերաբերյալ եվրոպական հիմնական չափորոշիչները: Համեմատական վերլուծության հիման վրա առանձնացվել են դատախազության ինստիտուցիոնալ և գործառնական մոդելները: Ըստ ֆունկցիոնալ ուղղվածության՝ գոյություն ունի դատախազությունների երկու մոդել, դատախազություն, որը հանդիսանում է հիմնականում քրեական հետապնդման մարմին, և դատախազություն, որը հանդիսանում է օրինականության նկատմամբ հսկողության մարմին:

Վերացարկվելով կոնկրետ ազգային իրավական համակարգերի առանձնահատկություններից՝ ատենախոսության մեջ դատախազության գործառույթները խմբավորվել են հետևյալ կերպ 1. քրեական հետապնդման և դրա հետ կապված գործառույթներ, 2. իրավապահ և քրեակատարողական հիմնարկների նկատմամբ հսկողություն, 3. ոչ քրեական դատավարություններում մասնակցությունը, 4. Օրինականության նկատմամբ ընդհանուր հսկողության իրականացումը, 5. այլ լիազորություններ: Աշխատանքում վերլուծվել են դատախազության մարմինների վերաբերյալ Եվրոպայի խորհրդի հանձնարարականները և դիրքորոշումները: Մույն ենթագլխի վերջում եզրակացվում է, որ Եվրոպայում բացակայում է դատախազության միասնական մոդելը, սակայն Եվրոպայի խորհրդի տարբեր մարմինների կողմից արտահայտված իրավական դիրքորոշումները սահմանագծում են այն պահանջները, որոնց պետք է բավարարեն դատախազության ինստիտուցիոնալ և գործառնական ազգային մոդելները:

Ատենախոսության երկրորդ՝ «ՀՀ Դատախազության սահմանադրական գործառույթների իրականացման հիմնախնդիրները» վերառությամբ գլուխը բաղկացած է երեք ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացվում են ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների և լիազորությունների հասկացությունը, հարաբերակցությունը և համակարգը:

Նշվում է, որ Հայաստանի Հանրապետությունում իրականացվող դատախազական բարեփոխումների երկրորդ փուլը նպատակամղված է դատախազության մարմինների գործառույթների հստակեցմանն ու համակարգի վերափոխմանը: ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում թվարկված դատախազության գործառույթների արդյունավետ իրականացման համար ՀՀ դատախազությունը պետք է օժտված լինի համապատասխան լիազորություններով: Եթե դատախազության գործառույթների և նրան վերապահված լիազորությունների միջև ստեղծվում է անհամաչափություն,

ապա նման դեպքում դատախազությունը չի կարող արդյունավետ կերպով և լրիվ ծավալով իրականացնել իր վրա դրված գործառնությունները, ուստի առաջարկվում է ներմուծել դատախազի լատենտային լիազորություններ հասկացությունը, որոնք թեև ուղղակիորեն նախատեսված չեն ընթացիկ օրենսդրությամբ, սակայն բխում են դատախազի սահմանադրական գործառնություններից և ճանաչում են ստացել իրավակիրառ պրակտիկայում (մասնավորապես՝ դատական մեկնաբանություններում):

Ատենախոսության մեջ ընդգծվում է, որ դատախազության գործառնությունների (լիազորությունների) սահմանադրական կարգավորումը սահմանափակում է դատախազության գործունեության շրջանակները: Դա նշանակում է, որ կենսական անհրաժեշտության դեպքում դատախազությանը հնարավոր չէ վերապահել այնպիսի գործառնություն, որը նախատեսված չէ Սահմանադրությամբ: Օրինակ՝ «Օպերատիվ-հետախուզական գործունեության մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածը կարգավորում է դատախազական հսկողությունը օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ, սակայն այն նախատեսված չէ ՀՀ դատախազության սահմանադրական գործառնությունների համակարգում:

Երկրորդ ենթազվխում ներկայացվում են ՀՀ դատախազության սահմանադրական գործառնությունները քրեական արդարադատության համակարգում: Քրեական արդարադատության համակարգում դատախազությունն ունի մի շարք գործառնություններ և լիազորություններ: Դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի հետազոտության առարկայի սահմաններից դուրս չգալու նպատակով անդրադարձ է կատարվել առավելապես սահմանադրաիրավական նշանակության խնդիրների: Մասնավորապես, նշվում է, որ «քրեական հետապնդում հարուցել» սահմանադրաիրավական հասկացության բովանդակության վերհանման համար հիմք պետք է ընդունել Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները: Այս իմաստով քրեական հետապնդման հարուցումը դատախազի՝ անձին հանցագործության մեջ մերկացնելուն ուղղված անմիջական դատավարական գործողություններ կատարելու նախնական կամ հետագա համաձայնություն տալն է:

Աշխատանքում քննարկվել է դատախազի կողմից քննչական գործողություններ կատարելու սահմանադրականության հիմնախնդիրը: Միանգամայն ընդունելի է համարվում տեսության մեջ առկա այն մոտեցումը, ըստ որի՝ դատախազի կողմից առանձին քննչական գործողությունների կատարումը թե՛ ձևով, թե՛ իր բովանդակության առումով բնավ քննության իրականացում չի նշանակում, քանի որ այս գործիքի կիրառման խնդիրը չէ վերհանել ապացուցման առարկան կազմող հանգամանքները, բացահայտել

հանցագործությունը, այն կատարող անձին և այլն²: Դատախազի կողմից առանձին քննչական գործողությունների կատարման անհրաժեշտությունը պայմանավորված է հետաքննության և նախաքննության օրինականության նկատմամբ իրականացվող հսկողությամբ: Քննչական գործողությունների կատարումը ինքնին չի նշանակում քննության գործառնությունների իրականացում, եթե դրա նպատակը չի համընկնում քննիչի առջև դրված խնդիրների լուծմանը: Մինչդատական վարույթում դատախազի կողմից քննչական գործողությունների կատարման նպատակներն են դատավարական հարաբերություններին վերաբերող բողոքների լուծման նպատակով քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունների, որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգում, անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու նպատակով դատարան դիմելու՝ քննիչի միջնորդությունը հաստատելիս, կամ խափանման և այլ հարկադրանքի միջոցի կիրառման օրինականության և հիմնավորվածության ստուգում, կասկածանքի և մեղադրանքի հիմնավորվածության ստուգում:

Մանրամասն անդրադառնալով դատարանում մեղադրանքը փոփոխելու ինստիտուտի սահմանադրականության հիմնահարցերին՝ վերլուծվել է ՀՀ քր. դատ. օր-ի 309.1 հոդվածի վերաբերյալ ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումները:

Աշխատանքի երրորդ ենթազվխը նվիրված է քաղաքացիական և վարչական արդարադատության համակարգում դատախազության սահմանադրական գործառնությունների իրականացման հիմնախնդիրներին:

Այստեղ նշվում է, որ ՀՀ-ում քաղաքացիական դատավարությունում դատախազության լիազորությունների ծավալի որոշման համար կարևոր նշանակություն ունի ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածում օգտագործվող «պետական շահերի պաշտպանություն» հասկացության սահմանադրաիրավական ընկալումը: Աշխատանքում ներկայացվում է «պետական շահ» հասկացության օրենսդրական ընկալման զարգացումը, և փորձ է արվում ներկայացնել նաև «պետական ոչ գույքային շահ» հասկացությունը:

«Դատախազության մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելն ընդգրկում է քաղաքացիական դատավարության կարգով

² Դամբարյան Ա., Մինչդատական վարույթի բարեփոխումները ՀՀ քրեական դատավարությունում, Երևան, 2011, Միմանյան Ս., Քննչական գործողությունների կատարմանը դատախազի մասնակցության անհրաժեշտությունը. Դատախազության համակարգի ղեկավար կազմի վերապատրաստման արդյունքները: Ելույթների ժողովածու, Գիտաուսումնական ձեռնարկ, 11 հատոր, Երևան, 2009, էջ 182-185:

պետության գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայցի հարուցումը, քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հատուցման հայցի հարուցումը: Բարեփոխումների երկրորդ փուլում ներդրվեց վարչական դատավարության ինստիտուտը, և դատախազին հնարավորություն տրվեց վարչական դատավարության կարգով պետության գույքային և ոչ գույքային շահերի պաշտպանության հայց հարուցել: Հիմք ընդունելով իրավակիրառ պրակտիկայի ուսումնասիրությունը՝ աշխատության մեջ եզրակացվում է, որ վարչական դատավարության կարգով պետության ոչ գույքային շահերի պաշտպանության դեպքերը հազվադեպ են: Այսպես, 2009 թ. ընթացքում ՀՀ գլխավոր դատախազության պետական շահերի պաշտպանության վարչության նախագծերով Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալի կողմից դատարան է ներկայացվել 29 հայց, որից 21-ը հարուցվել է քաղաքացիական դատավարության, իսկ 8-ը՝ վարչական դատավարության կարգով, ընդ որում՝ 1 հայց հարուցվել է պետության ոչ գույքային շահերի պաշտպանության համար:

Նշվում է, որ քրեական դատավարության կարգով հանցագործությամբ ուղղակիորեն պետությանը պատճառված գույքային վնասի հայց հարուցելու գործառնությունը դատախազի՝ ՀՀ Սահմանադրության 103-րդ հոդվածի 4-րդ կետով, «Դատախազության մասին» ՀՀ օրենքով և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքով վերապահված բացառիկ լիազորությունն է:

Այսպիսով, պետական շահերի պաշտպանության բնագավառներում ՀՀ դատախազության լիազորությունների իրականացման մեխանիզմների վերլուծությունը ցույց է տալիս, որ պետական շահերի պաշտպանության ոլորտում առկա են որոշակի հիմնախնդիրներ՝ դատախազության լիազորությունների ոչ հստակ իրավական կարգավորումը, օրենսդրական ակտերում եղած հակասություններն ու թերությունները, որոնք առկա են ինչպես «Դատախազության մասին» ՀՀ օրենքում, այնպես էլ ՀՀ քաղաքացիական ու վարչական դատավարությունների օրենսգրքերում և այլ իրավական ակտերում:

Աշխատանքի երրորդ «ՀՀ դատախազության սահմանադրաիրավական կարգավիճակի առանձին հիմնախնդիրներ» վերտառությամբ գլուխը բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում վերլուծվում են սահմանադրական օրինականության ապահովման ոլորտում ՀՀ դատախազության լիազորությունները:

Սահմանադրական օրինականությունը ենթադրում է Սահմանադրության որպես երկրի հիմնական օրենքի իրավական բնույթը, Սահմանադրության գերակայությունը իրավական համակարգում, Սահմանադրության գերակայությունը երկրի ողջ տարածքում: Հայաստանի Հանրապետությունում

սահմանադրական օրինականության վիճակը դեռևս մտահոգիչ է. ընդունվում են օրենսդրական ակտեր, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրությանը, խախտում են մարդու սահմանադրական իրավունքները և ազատությունները:

Ատենախոսության մեջ սահմանադրական օրինականության ապահովման ոլորտում ՀՀ դատախազության լիազորությունները բաժանվել են երեք խմբի՝ 1. սահմանադրական դատավարության կարգով համապատասխան իրավական ակտերի սահմանադրականության վիճարկում, 2. վարչական դատավարության կարգով գերատեսչական իրավական ակտերի սահմանադրականության վիճարկում, 3. պատիժները և հարկադրանքի այլ միջոցներ կիրառող մարմինների վարչակազմերի պատիժները և հարկադրանքի այլ միջոցների կիրառմանը վերաբերող հրամանների, կարգադրությունների և որոշումների՝ գործող օրենսդրությանը (Սահմանադրությանը) համապատասխանության վիճարկում:

Սահմանադրական դատավարության կարգով համապատասխան իրավական ակտերի սահմանադրականության վիճարկման լիազորությունը ՀՀ Սահմանադրության 2005 թ. փոփոխություններով վերապահվել է ՀՀ գլխավոր դատախազին:

ՀՀ Սահմանադրական դատարանն ընդունելով ՀՀ գլխավոր դատախազի լիազորության իրականացման ոլորտում վերլուծվում են ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացության սահմանադրաիրավական բովանդակությունը, ինչպես նաև այն հարցը, թե ՀՀ գլխավոր դատախազը որ նորմատիվ-իրավական ակտերի սահմանադրականության հարցերով կարող է դիմել ՀՀ Սահմանադրական դատարան:

Նշվում է, որ եթե ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածում օգտագործվող «իր վարույթում գտնվող կոնկրետ գործով» հասկացությունն ընկալվի զուտ դրա քրեադատավարական իմաստով, ապա կստացվի, որ ՀՀ գլխավոր դատախազի այս լիազորության իրականացումը դառնում է անհնար, քանի որ այդ լիազորության իրականացման համար ՀՀ գլխավոր դատախազը նախ սովյալ գործը պետք է ընդունի իր վարույթ և հանդես գա որպես վարույթի իրականացնող մարմին, իսկ, դատախազությունը օրենսդրությամբ չի կարող իրականացնել նախաքննություն:

Վերլուծելով նաև ՀՀ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը՝ նշվում է, որ սահմանադրաիրավական իմաստով կոնկրետ գործը համարվում է ՀՀ գլխավոր դատախազի վարույթում բոլոր այն դեպքերում, երբ սովյալ գործի նկատմամբ ՀՀ դատախազությունն իրականացնում է իր սահմանադրական գործառնությունները:

Երկրորդ հարցին պատասխանելու նպատակով համակարգային վերլուծության են ենթարկվել ՀՀ Սահմանադրության 100-րդ և 101-րդ հոդվածները: ՀՀ գլխավոր դատախազը Սահմանադրական դատարան է դիմում կոնկրետ

գործին առնչվող նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման հարցով: Այս դրույթում օգտագործվում է «նորմատիվ ակտ» հասկացությունը, որն ընդգրկում է օրենքները և բոլոր ենթաօրենսդրական ակտերը: Քննարկվում է, թե արդյոք ՀՀ գլխավոր դատախազը կարող է դիմել ՀՀ Սահմանադրական դատարանն այնպիսի նորմատիվ ակտի սահմանադրականության որոշման հարցով, որը նախատեսված չէ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետում: ՀՀ գլխավոր դատախազի՝ ՀՀ Սահմանադրական դատարան դիմելու իրավասության դեպքում հղում չի կատարվում ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին կետին, և դրա փոխարեն նշվում է «նորմատիվ ակտ» հասկացությունը: Անշուշտ, ասվածից չի կարելի եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրական դատարանը իրավասու է ՀՀ գլխավոր դատախազի դիմումի հիման վրա լուծելու կոնկրետ գործով կիրառված ցանկացած նորմատիվ ակտի սահմանադրականությունը, քանի որ ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին հոդվածն է սահմանում այն նորմատիվ ակտերի ցանկը, որոնք կարող են վիճարկվել Սահմանադրական դատարանում, ուստի ՀՀ գլխավոր դատախազը ՀՀ Սահմանադրական դատարանում կարող է վիճարկել միայն այն նորմատիվ ակտերը, որոնք նախատեսված են ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասում: Վերը նշված իրավական անորոշությունը ինչ-որ կերպ վերացվել է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 71-րդ հոդվածի 1-ին մասով: Քննարկվող հարցի տեսանկյունից սահմանադրական կարգավորումը հստակեցնելու նպատակով առաջարկվում է ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 7-րդ կետում «առնչվող» բառից հետո ավելացնել «ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված» բառակապակցությունը:

Անդրադարձ է կատարվել դատախազի կողմից վարչական դատարանում գերատեսչական ակտերի սահմանադրականության վիճարկման իրավաչափության հարցին:

Ինչպես տեսնում ենք, վարչական դատարանը կարող է քննել գերատեսչական նորմատիվ իրավական ակտերի սահմանադրականության վերաբերյալ գործեր: Արդյոք նման դեպքում վարչական դատարանի վրա չի՞ դրվում սահմանադրական արդարադատության գործառույթ: Նշված հարցի առնչությամբ վերլուծվել է ՀՀ Սահմանադրական դատարանի 25.11.2008թ. ՄԴՈ-780 որոշմամբ արտահայտված դիրքորոշումը և եզրակացվել, որ թեև ՀՀ Սահմանադրական դատարանը քննադատում է վարչական դատարանում գերատեսչական նորմատիվ ակտերի սահմանադրականությունը վիճարկելու վերաբերյալ մոտեցումը, սակայն հստակ չի պատասխանում այն հարցին, թե, վերջին հաշվով, նման ակտերի սահմանադրականությունը ո՞ր դատարանում պետք է վիճարկվի: Այնուհանդերձ, ատենախոսության մեջ արտահայտվում է այն կարծիքը, որ առհասարակ արհեստական է գերատեսչական նորմատիվ ակտերի սահմանադրականության վիճարկման հարցադրումը այն պատճառաբանությամբ, որ գերատեսչական բոլոր ակտերն ընդունվում են

օրենքի հիման վրա: Եթե գերատեսչություններն ընդունում են այնպիսի ակտեր, որոնք հակասում են ՀՀ Սահմանադրությանը, ապա նախ և առաջ պետք է վիճարկել ոչ թե գերատեսչական ակտի սահմանադրականությունը, այլ այն օրենքի, որը նման ձևի կամ բովանդակության գերատեսչական ակտ ընդունելու հնարավորություն է տվել: Իսկ եթե ընդունվել է այնպիսի գերատեսչական ակտ, որը հիմնված չէ օրենքի վրա, կամ դրա կարգավորումը դուրս է օրենքով որոշված սահմաններից, ապա այդ դեպքում պետք է վիճարկել ոչ թե գերատեսչական ակտի սահմանադրականությունը, այլ օրինականությունը:

Համաձայն «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 4-րդ մասի պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման օրինականության նկատմամբ հսկողություն իրականացնելիս՝ օրենսդրությանը հակասող ակտ հայտնաբերելիս, դատախազը միջնորդում է վերանայել այն, իսկ այն դեպքերում, երբ դատախազի կարծիքով հապաղումը կարող է հանգեցնել ծանր հետևանքների, դատախազն իրավունք ունի կասեցնելու այդ ակտի գործողությունը և այն վերանայելու միջնորդագիր ներկայացնել: Ելնելով դրանից՝ ատենախոսության մեջ այն միտքն է արտահայտվում, որ սահմանադրական օրինականության ապահովման կառուցակարգերի տարրերից է ոչ միայն Սահմանադրությանը հակասող ակտերի վիճարկման հնարավորությունը, այլ նաև ՀՀ Սահմանադրությանը հակասող ակտերի գործողության կասեցումը: Վերլուծելով «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածը նշվում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, չի կարգավորում օրենսդրությանը հակասող իրավական ակտերի, այդ թվում՝ նորմատիվ ակտերի, գործողության կասեցման հետ կապված մի շարք հարաբերություններ: Աշխատության մեջ առաջարկվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որով կսահմանվի, որ դատախազի կողմից իրավական ակտի կասեցման դեպքում նշվեն իրավական ակտերի կասեցման պատճառը կամ նպատակը, ժամկետը, մինչև իրավական ակտի գործողության կասեցումը և դրա գործողության վերականգնումից հետո ծագած հարաբերությունների կարգավորման կարգը և պայմանները:

Երկրորդ ենթազխում վերլուծվում են Հայաստանի Հանրապետության դատախազության խնդիրները իրավաստեղծ գործունեության մասնակցության ընթացքում: Ընդգծվում է, որ թեև ՀՀ Սահմանադրությամբ և «Դատախազության մասին» ՀՀ օրենքով ուղղակիորեն նախատեսված չէ իրավաստեղծ գործունեությանը ՀՀ դատախազության մասնակցության վերաբերյալ իրավանորմ, սակայն այն ներհատուկ է ՀՀ դատախազությանը՝ որպես պետաիրավական ինստիտուտի, որը, իրականացնելով իր գործառույթները, տիրապետում է օրենսդրության բացերի, հակասությունների և թերությունների վերաբերյալ ծավալուն տեղեկատվության: ՀՀ

դատախազության մասնակցությունը իրավաստեղծ գործունեությանը ունի պրոֆիլակտիկ նշանակություն, քանի որ դրա շնորհիվ իրավական ակտերի նախագծերի մշակման և քննարկման ընթացքում կարելի է վեր հանել օրենքի հնարավոր խախտումները:

Փաստվում է, որ թեև ՀՀ գլխավոր դատախազն օժտված չէ օրենսդրական նախաձեռնության իրավունքով, սակայն դատախազությունը՝ որպես պետական ինստիտուտ, ակտիվորեն մասնակցում է իրավաստեղծ գործունեությանը:

ՀՀ դատախազության կանոնակարգով նախատեսված են իրավաստեղծ գործունեությանը ՀՀ դատախազության մասնակցության հիմնական ձևերը, սակայն ատենախոսության մեջ կարծիք է հայտնվում, որ իրավաստեղծ գործընթացին դատախազության մասնակցության հետ կապված հիմնական հարաբերությունները պետք է կարգավորել «Դատախազության մասին» ՀՀ օրենքով:

ՀՀ դատախազությունը իրավաստեղծ գործունեությանը մասնակցում է ոչ միայն անուղղակի եղանակով (նորմատիվ իրավական ակտերի նախագծեր, առաջարկներ, շրջանառության մեջ դրված նախագծերի վերաբերյալ կարծիքներ տալով), այլև ի դեմս ՀՀ գլխավոր դատախազի՝ իրականացնում է նաև իրավաստեղծ գործունեություն: «Դատախազության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն գլխավոր դատախազը իր իրավասության սահմաններում ընդունում է ներքին և անհատական իրավական ակտեր, իսկ օրենքով ուղղակիորեն նախատեսված դեպքերում նորմատիվ իրավական ակտեր:

ՀՀ գլխավոր դատախազի կողմից նորմատիվ իրավական ակտերի ընդունման իրավաչափությունը պարզելու նպատակով վերլուծվել են հետևյալ հանգամանքները.

1. Ինչպես նշվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքով, ՀՀ գլխավոր դատախազը կարող է նորմատիվ իրավական ակտեր ընդունել միայն օրենքով նախատեսված դեպքերում, ինչը նշանակում է, որ ՀՀ գլխավոր դատախազի՝ նորմատիվ-իրավական ակտերով հասարակական հարաբերությունների կարգավորման հայեցողությունը սահմանափակված է: Օրենքով պետք է նախատեսվեն այն հարաբերությունները կամ ոլորտները, որոնց կարգավորման նպատակով ՀՀ գլխավոր դատախազը իրավասու է ընդունելու նորմատիվ իրավական ակտեր:

2. Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է այն սուբյեկտներին, որոնք իրավասու են ընդունելու նորմատիվ-իրավական ակտեր, սակայն այդ ցանկում ՀՀ գլխավոր դատախազը՝ որպես նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտ, նախատեսված չէ: Նշված հակասությունը լուծելու համար առաջարկվում է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը լրացնել դրույթով, ըստ որի՝ ՀՀ

գլխավոր դատախազն իրավունք ունի օրենքով նախատեսված դեպքերում ընդունելու նորմատիվ-իրավական ակտեր:

Ատենախոսության Եզրակացություններ բաժնում ներկայացվում են ուսումնասիրության հիմնական արդյունքները, որոնք մասնավորապես հետևյալն են.

1. Դատախազության գործունեության կազմակերպման հետ կապված հարաբերությունների՝ գործադիր իշխանության ակտերով կարգավորումը թույլատրվում է միայն այն դեպքում, եթե գործադիր իշխանության մարմինները օրենքով լիազորված են նման ոլորտը կարգավորող ակտ ընդունելու:

2. «Դատախազության մասին» ՀՀ օրենքում ուղղակիորեն թվարկված են դատախազի գործունեության հետևյալ սկզբունքները (դրույթները)՝ նրա գործունեության հրապարակայնությունը, դատախազի ինքնուրույնությունը և նրա գործունեությանը միջամտելու անթույլատրելիությունը, նրա ապաքաղաքականացվածությունը: Ընդգծենք, որ վերը նշված սկզբունքները (դրույթները) «Դատախազության մասին» ՀՀ օրենքում ուղղակի ամրագրված սկզբունքներն են, ինչը չի բացառում «Դատախազության մասին» ՀՀ օրենքից բխող այլ սկզբունքների գոյությունը (օրինակ՝ դատախազության կենտրոնացվածությունը, դատախազի անկախությունը): Մյուս կողմից՝ օրենսդիրը որպես ինքնուրույն սկզբունք է նշել դատախազի ապաքաղաքականացվածությունը: Կարծում ենք, որ դատախազի ապաքաղաքականացվածության վերաբերյալ օրենսդրական դրույթը դատախազության գործունեության ինքնուրույն սկզբունք չէ, այլ հանդիսանում է դատախազի անկախության սկզբունքի ապահովման եղանակներից մեկը:

3. Դատախազության սահմանադրական գործառույթների արդյունավետ իրականացման համար ՀՀ դատախազությունը պետք է օժտված լինի համապատասխան լիազորություններով: Եթե դատախազության գործառույթների և նրան վերապահված լիազորությունների միջև ստեղծվում է անհամաչափություն, ապա նման դեպքում դատախազությունը չի կարող արդյունավետ կերպով և լրիվ ծավալով իրականացնել իր վրա դրված գործառույթները: Օպերատիվ-հետախուզական գործունեության նկատմամբ դատախազական հսկողության սահմանադրական ուղղությունը անհրաժեշտ է նախատեսել ՀՀ Սահմանադրության մեջ, իսկ մինչ այդ անհրաժեշտ է ընթացիկ օրենսդրության մեջ «հետաքննություն» հասկացությունը փոփոխել այնպես, որ այն ընդգրկի նաև օպերատիվ-հետախուզական գործունեության ոլորտը:

4. Քրեական հետապնդման հարուցումը անձին հանցագործության մեջ մերկացնելուն ուղղված անմիջական դատավարական գործողություններ կատարելու համար դատախազի կողմից նախնական կամ հետագա համաձայնություն տալն է:

5. Քննչական գործողությունների կատարումը ինքնին չի նշանակում քննության գործառույթի իրականացում: Մինչդատական վարույթում

դատախազի կողմից քննչական գործողությունների կատարման նպատակներն են՝ դատավարական հարաբերություններին վերաբերող բողոքների լուծման նպատակով քննիչի, հետաքննության մարմնի աշխատակցի գործողությունների, որոշումների օրինականության և հիմնավորվածության ստուգում, անձի նկատմամբ հարկադրանքի միջոցներ կիրառելու նպատակով դատարան դիմելու՝ քննիչի միջնորդությունը հաստատելիս, կամ խափանման և այլ հարկադրանքի միջոցի կիրառման օրինականության և հիմնավորվածության ստուգում, կասկածանքի և մեղադրանքի հիմնավորվածության ստուգում:

6. Օրենսդրի՝ դատախազին (մեղադրողին) օրինական ուժի մեջ չմտած դատական ակտի դեմ վճռաբեկ բողոք բերելու իրավունքից զրկելու մոտեցումը հակասում է ՀՀ քր. դատ. օր-ի 23-րդ հոդվածի 5-րդ կետին: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 5-րդ կետի համաձայն՝ նույն իրավական ակտի տարբեր մասերի միջև հակասության դեպքում գործում են այն մասի դրույթները, որոնք բխում են տվյալ իրավահարաբերությունները կարգավորող իրավունքի սկզբունքներից: Տվյալ դեպքում մրցակցությունը քրեական դատավարության սահմանադրական սկզբունք է: Եթե որևէ նորմ հակասում է տվյալ սկզբունքին, ապա պետք է կիրառվի իրավունքի սկզբունքը:

7. «Դատախազության մասին» ՀՀ օրենքը, ի տարբերություն «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի, չի կարգավորում օրենսդրությանը հակասող իրավական ակտերի, այդ թվում՝ նորմատիվ ակտերի, գործողության կասեցման հետ կապված մի շարք հարաբերություններ: Ուստի անհրաժեշտ է պարզել, թե դատախազի կողմից օրենսդրությանը հակասող իրավական ակտի գործողությունը կասեցնելու հետ կապված հարաբերությունների վրա արդյոք կարող է տարածվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված՝ իրավական ակտերի կասեցման իրավակարգավորումը: «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի համաձայն՝ իրավաստեղծ մարմնի, դրա իրավահաջորդի կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնի որոշմամբ իրավական ակտի գործողությունը կարող է կասեցվել: Ինչպես նկատում ենք, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը իրավական ակտերի կասեցման լիազորությունը վերապահում է իրավաստեղծ մարմնին կամ դրա իրավահաջորդին կամ համապատասխան լիազորություններով օժտված վերադաս մարմնին: Պատիժների և հարկադրանքի այլ միջոցների կիրառման ոլորտում իրավական ակտեր ընդունելու լիազորությամբ օժտված են հիմնականում գործադիր իշխանության մարմինները (ՀՀ արդարադատության նախարարը, քրեակատարողական ծառայությունը, ՀՀ ոստիկանությունը և այլն): ՀՀ դատախազությունը չի համարվում նշված մարմինների նկատմամբ վերադաս, ուստի «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով նախատեսված իրավական ակտերի կասեցման վերաբերյալ նորմերը չեն տարածվում ՀՀ դատախազության կողմից իրավական

ակտերի գործողության կասեցման վրա: Առաջարկվում է «Դատախազության մասին» ՀՀ օրենքում նախատեսել դրույթ, որով կասեցման վրա, որ դատախազի կողմից իրավական ակտի կասեցման դեպքում նշվում են իրավական ակտերի կասեցման պատճառը կամ նպատակը, ժամկետը, մինչև իրավական ակտի գործողության կասեցումը և դրա գործողության վերականգնումից հետո ծագած հարաբերությունների կարգավորման կարգը և պայմանները:

8. ՀՀ գլխավոր դատախազը՝ որպես նորմատիվ իրավական ակտ ընդունելու իրավասություն ունեցող սուբյեկտ, նախատեսված չէ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքում: ՀՀ Սահմանադրությամբ և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքով չնախատեսված մարմինների ընդունած նորմատիվ-իրավական ակտերն իրավաբանական ուժ չունեն: Մտացվում է, որ «Դատախազության մասին» ՀՀ օրենքը նախատեսում է ՀՀ գլխավոր դատախազի՝ օրենքով նախատեսված դեպքերում նորմատիվ-իրավական ակտեր ընդունելու իրավասությունը, մինչդեռ, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածում ՀՀ գլխավոր դատախազը նախատեսված չէ այն սուբյեկտների ցանկում, որոնք իրավունք ունեն ընդունելու նորմատիվ-իրավական ակտ: Կարծում ենք՝ նկարագրված իրավիճակում «Դատախազության մասին» ՀՀ օրենքի և «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի միջև առկա է հակասություն: Նշված իրավական կոլիզիան լուծելիս անհրաժեշտ է ղեկավարվել «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի պահանջներով: Նշված հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինևույն մարմնի նոր ընդունած իրավական ակտը չպետք է հակասի նախկինում ընդունված և ուժի մեջ մտած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավաբանական ակտերին: Մինևույն մարմնի ընդունած հավասար իրավաբանական ուժ ունեցող իրավական ակտերի միջև հակասության դեպքում գործում են ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտերի նորմերը, բացառությամբ այն դեպքերի, երբ իրավական ակտն ընդունվել և ուժի մեջ է մտել մինչև «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ ուժի մեջ մտնելը: Նշված դեպքում գործում է ավելի ուշ ուժի մեջ մտած իրավական ակտը: Սույն դեպքում «Դատախազության մասին» ՀՀ օրենքն ընդունվել է «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի՝ ուժի մեջ մտնելուց հետո, ուստի կիրառվում է այն դրույթը, ըստ որի՝ հավասար իրավաբանական ուժ ունեցող ակտերի միջև հակասության դեպքում գործում է ավելի վաղ ուժի մեջ մտած իրավական ակտը, տվյալ դեպքում՝ «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքը: Նշված հակասությունը լուծելու համար առաջարկում ենք «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը լրացնել դրույթով, ըստ որի՝ ՀՀ գլխավոր դատախազն իրավունք ունի օրենքով նախատեսված դեպքերում ընդունելու նորմատիվ-իրավական ակտեր:

Ատենախոսությունն ունի նաև հավելվածների բաժին, որտեղ ատենախոսության հեղինակի կողմից ներկայացվում են ՀՀ

Սահմանադրությունում, <Սահմանադրական դատարանի մասին>, <Դատախազության մասին> և <Իրավական ակտերի մասին> ՀՀ օրենքներում փոփոխություններ կատարելու նախագծեր:

**Ատենախոսության թեմայով հրապարակված
գիտական աշխատանքներ**

1. «Դատախազության մոդելների իրավահամեմատական վերլուծություն» Օրինականություն թիվ 46, Երևան 2008, 16-19 էջեր:
2. «ՀՀ գլխավոր դատախազի իրավական ակտերը որպես դատախազական քաղաքականության իրականացման միջոց» Օրինականություն թիվ 48, Երևան 2008, 23-25 էջեր:
3. «ՀՀ դատախազության սահմանադրական գործառույթների և լիազորությունների հասկացությունը, հարաբերակցությունը և համակարգը» Օրինականություն թիվ 56, Երևան 2009, 9-13 էջեր:
4. «ՀՀ դատախազության լիազորությունները սահմանադրական օրինականության ապահովման ոլորտում» Օրենք և իրականություն թիվ 6, Երևան 2009, 7-11 էջեր:
5. «Դատարանում մեղադրանքը փոփոխելու սահմանադրականության հիմնախնդիրները» Օրենք և իրականություն թիվ 9, Երևան 2009, 1-4 էջեր:

РЕЗЮМЕ

Саргис Васяевич Мнацаканян

**ПРОБЛЕМЫ КОНСТИТУЦИОННОГО ПРАВОВОГО
СТАТУСА ПРОКУРАТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ**

Предлагаемая диссертационная работа посвящена проблемам конституционного правового статуса прокуратуры Республики Армения. В работе автор попытался проанализировать понятия и элементы конституционного правового статуса прокуратуры РА, место и роль прокуратуры РА в разделении государственной власти в системе конституционного принципа, конституционные принципы деятельности и организации прокуратуры РА, основные Европейские критерии статуса прокуратуры, понятие, отношение и система конституционной функции и полномочия прокуратуры РА, проблемы реализации конституционных функций прокуратуры РА в системе уголовного правосудия, проблемы реализации конституционных функций прокуратуры РА в системе гражданского и административного правосудия. Особенное внимания уделяется полномочиям прокуратуры в области обеспечения конституционного порядка.

Диссертант считает, что для эффективного осуществления конституционных функций прокуратура РА должна быть наделена соответствующими полномочиями. Если возникают несоответствия между функциями прокуратуры и возложенными полномочиями, тогда в данной ситуации прокуратура не может эффективно и в полном объеме осуществить возложенные на нее функции.

Автор предлагает внедрить понятие латентных полномочий прокурора, которые, будучи прямо не непредусмотренными действующим законодательством, вытекают из конституционных функций прокурора, получив известность в правоприменительной практике (в частности, в судебных комментариях).

Автор отмечает, что исчерпывающий перечень (полномочий) функций прокуратуры в конституции РА ограничивает круг деятельности

прокуратуры. Это означает, что при жизненной необходимости прокуратуре невозможно отвести такую функцию, которая не предусмотрена конституцией. Например, 35 статья закона РА об "оперативно - розыскной деятельности" регулирует прокурорский надзор над оперативно - розыскной деятельностью, однако она не предусмотрена в системе конституционных функций прокуратуры РА.

Прокуратура РА участвует в создании правовой деятельности не только косвенным способом (проекты, предложения нормативно правовых актов, мнения о проектах, находящихся в обращении), но и осуществляет правовую деятельность в лице генерального прокурора РА. В соответствии с пунктом 6 части 110-ой статьи закона РА о "прокуратуре" генеральный прокурор в рамках своих полномочий принимает внутренние и индивидуальные правовые акты, а в случаях, прямо предусмотренных законом – нормативно правовые акты.

Диссертант полномочия прокуратуры РА в области конституционного правового обеспечения разделяет на три группы. 1. оспаривание конституционности правовых актов в соответствии с процедурами конституционного судебного процесса, 2. оспаривание конституционности ведомственных актов в соответствии с административным процессом, 3. оспаривание соответствия приказов, предложений и решений применения наказаний и других методов принуждения административными органами, осуществляющими наказания и другие методы принуждения, с действующим законодательством (Конституцией).

Обсуждая вопрос конституционности следовательских действий со стороны прокурора, автор отмечает, что осуществление отдельных следовательских действий не означает осуществления процесса следствия. Автор отмечает следующие цели следовательских действий прокурора во время досудебного производства: проверка правомерности и обоснованности отдельных следственных актов и решений следователя, работников следственных органов с целью разрешения жалоб относительно судебных отношений; проверка правомерности и обоснованности посреднических действий следователя или применений мер принуждения по отношению к лицу, обратившемуся в суд с целью подтверждения применения мер принуждения; проверка обоснованности сомнений и обвинений.

Применение следовательских действий, преследующих подобные цели, считается формой прокурорского надзора.

REZUME

Mnatsakanyan Sargis V.

MAIN PROBLEMS OF CONSTITUTIONAL-LEGAL STATUS OF THE PROSECUTOR'S OFFICE OF THE REPUBLIC OF ARMENIA

The work is dedicated to the main problems of constitutional-legal status of the Prosecutor's Office of the RA. In the work the author tries to analyse the notion and elements of constitutional-legal status of the RA Prosecutor's Office; the place and role of the RA Prosecutor's Office in the system of constitutional principle of the state power separation; constitutional principles of the RA Prosecutor's Office functioning and organization; the main European criteria of the status of the Prosecutor's Office; the notion, relationship and system of constitutional functions and authorization of the RA Prosecutor's Office; the main problems of realization of constitutional functions of the RA Prosecutor's Office in the system of criminal law; the main problems of realization of constitutional functions of the RA Prosecutor's Office in the civil and administrative law system. A special attention is paid to the authorities of the Prosecutor's Office in the field of Constitutional legitimacy assurance.

The candidate for a degree finds that for the successful realization of the constitutional functions of the Prosecutor's Office, the RA Prosecutor's Office must have proper authorities. If there is a discrepancy between the functions and authorities of the Prosecutor's Office, the Prosecutor's Office is unable to realize its functions fully and successfully. The author offers to implement the notion of the Prosecutor's Office latent authorities which though not directly specified by the current legislation, come from the Prosecutor's Office constitutional functions and are used in legal practice (particularly in judicial judgements).

The author mentions that the exhaustive enumeration of the Prosecutor's Office functions (authorities) in the RA Constitution restricts the range of the Prosecutor's Office actions. It means that in case of vital necessity it is impossible to reserve the Prosecutor's Office function which is not specified by the Constitution. For example, the article N35 of the RA Law "About the

operative-search activity” regulates the prosecutor's supervision over the operative-search activity; however it is not specified in the system of Constitutional functions of the RA Prosecutor's Office.

The RA Prosecutor's Office participates in the creation of legislation not only indirectly (projects of normative legal acts, propositions, opinions expressed about the projects put into action) but it also performs activity of creation of legislation in the person of the Prosecutor General of the RA. According to the point 6 of the first part of the article N10 of the RA Law “About the Prosecutor's Office” the Prosecutor General within the frames of his authorities adopts internal and individual legal acts, and normative legal acts in cases specified by the law.

The candidate for a degree divides the RA Prosecutor's Office authorities into three groups in the field of constitutional legitimacy assurance: 1. challenging the constitutionality of corresponding legal acts by the constitutional court procedure; 2. challenging the constitutionality of departmental legal acts by the administrative court procedure, 3. challenging the conformity with the acting legislation (Constitution) of commands, orders and decisions concerning the punishment and other measures of constraints of bodies and departments administering punishment and other measures of restraints.

Discussing the problem of constitutionality of legal actions performed by the Prosecutor, the author mentions that the fulfilment of single legal acts does not mean the realization of the examination procedure. During the pre-trial proceedings the aims of fulfilment of legal actions by the Prosecutor are the following: the verification of legitimacy and relevance of actions and decisions of the investigator, the investigating body officer while confirming the investigator's intermediation of applying to the court with the aim of administration of constraint measures towards a person; or the verification of legitimacy and relevance of administration of restraint or other measures of constraints, the verification of relevance of a suspicion and an accusation aiming at the solution of complaints concerning the judicial relationships. The fulfilment of investigational actions administered for similar aims is considered a form of prosecutor's supervision.



Հանրապետության Կառավարության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության
Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության

Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության
Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության

Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության
Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության

Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության
Հանրապետության կողմից արված քաղաքական որոշումները և
արտաքին քաղաքականությունը և այլն, որոշվում են Հանրապետության



Տպագրված է «ԼԻՄՈՒՇ» ՍՊԸ-ի տպարանում:
Տպարանակ՝ 50:



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՈՄՍՏԱՆԻ